

Hentchak :  
Organe Central  
DU PARTI  
HENTCHAKISTE

# ՀԵՆՉԱԿ

Journal Arménien  
mensuel  
XX Année

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

### ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԱԶԳԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՂԻ ՀԱՆԴԵՊ

Ո՞վ է շահագործող ազգը :

— Դա՝ մեր փաշաները, էֆէնդիները, բէգերը, աղաները, սուլթանական դասն. առաջ ծունկ չոքող, նրա նետած փշբանքներով իրենց որովայնը պարարտացնող, թուրք բռնապետութեան այն ամէն կարգի հայ սպասաւորները՝ և ստրուկներն են, որոնք գոյն որ իրենց զուրաց թողնում են իրենց ուսերի վրան, կեանքի զոյտութեան ուրիշ նպատակ չունին, եթէ ոչ ճինչ գետին երկրագել, շողոքորթել, ստել, ամէն տեսակ հրէշային աճպարարութիւնների մէջ մտնել, սուլթանական կառավարութեան ձածուկ ու յայտնի գործիքը հանդիսանալ և, որպէս ո ի ը ո դ պ ե տ ո ւ թ ե ա ն կազմի մէջ մտնող մի մասնիկ, կողոպտել, հարստահարել, իրաւաթափ անել արտադրող, աշխատող, դասակարգին։ Մեր խօսքը այլ շահագործողների մասին է, որոնք չեն մոռանում վերսպանցորդն ազգ տիսուսը տալ իրենց, որովհետեւ, դասակարգային կուրի մէջ կլանող ամբողջութիւնը իրենց և իրենց արբանեակ տարրերին են համարում։

Ո՞վ է շահագործող ազգը :

— Դա մեր գերազանցօրիէն անպէտը և կեղեցական կղերական դասակարգին է, որ միշտ և ամէն պարագայի ունի թէ՝ տաք և թէ՝ ցուրտ բերան։ Նոյն բերանը և անէծք է և հայհոյանք, նայերով թէ ո՞րն է ձեռնոտու իր դասակարգային շահին։ Դա է, որ իր տաճարը, « վեհագոյն էակինն ». բատկացրած իր բնակարանը, իր սրբութիւն սրբոցը պատրաստ է ամէն տեսակ պրօպագանդայի վայր դարձնել և աշխարհի զօրեղների առաջ բուրփառել, նոյն խակ եթէ նրանք մարդակերպ հրէշներ լինէին, միայն թէ նրանք իր եկեղեցակրօնական արտօնութիւնների պաշտպանը լինէին, — այսինքն իր դասակարգային տիրապետութեան սեպհական գործիքներին չփալչէին։ Նա վիտէ « սուրբն կարգը » դասել, « Եբրահամու վիրկը » հանդէցնել մողովրդային, զանգուածներին արեան և արտասուքի մէջ լողացնողներին՝ միայն թէ նրանք մետասաներորդ ժամին իրենց « հոգու վրկութեան » տուրքը առաջ տացին, և ո՞քան մեծագումար, անքան աւելի

լաւ և յափառենական վրկութեան աւելի իլաւունքներ ունեցողներ։

Այդ դասակարգին է, որ քարացնում, մթացնում է մողովրդային զանգուածների զիտակցութիւնը, նրանց կերակրում է բնագանցական մնամէջ խօսքերով, քարոզում է հնապանդութիւն, հեղութիւն, համակերպութիւն Զարիքի, օրուան զօրաւորի զէմ, և այդ բոլորը նրա համար, որ այս աշխարհի թշուառութեան բովից անցներով մաքրուի, զտուի և միւս աշխարհի երանութիւնները վայելի, — այն աշխարհի որի մասին ստոյգ ոչինչ կարող է ասել և ինքը յորդութիւնը։ Սա անդաւաճան լնկերն է սուր ունեցող զօրաւորի, նրա գոտին օրհնողը, նրա ճակատը իւղ քողը և « օծեալ Ցեառն » անողը։ « Հոտը » պարտաճանաւէ, ամէն ինչ կարգին զնում է, երբ « Հոտը » հաւատարմօրէն անցնում է փարախով, այնուեղ թողնում է իր բուրդի մէկ մասը, — տալիս է « Աստծոն » ինչող Աստծունն է » և այնտեղից գուրս գալուց յետոյ դրսեւմն էլ տալիս է « կայսերը այն ինչոր կայսերն է ». մէջտեղը բնիչ է մնում — տանջանքի մի կեանք, բարձունքները մի օր երթարու և լսու վայելելու համար, որովհետեւ նրա համար վարը տվես տեղ և ապատանարան չկայ։ Ապդ ասածը, խկապէն, սա է. և հայը ճշմարիտ հայ է, ազգը ուղիղ և արդար ազգ է, եթէ իր յետեւից է զնում։ Հայը այնքան աւելի լաւ՝ մեծ տիրացու ազգ է, որքան որ այս դասակարգի խղէօլզիան կընդունի, ու նըանով կընթանայ, և որովհետեւ եկեղեցի, եկեղեցական դասակարգ Ազգ ասել է, — և սա մտել է հայի ուղն ու ծուծի մէջ — ուստի աս էլ ազգ տիսուրը իրեն և իր հստեւողներին է վերագրում, ու շարօնակում է իրենից գուրս եղողներին խորթ, օտարներ, անհարազամներ չամարել և իրեն չհետեւողներին Ազգի անդամներ չնկատել։ Սա էլ, սա էլ շահագործող Ազգ դասակարգին է, որ վայերում է ուրիշի քրտինքի վաստակը և այդ ուրիշին իրեն պատուանդանը գարձնում բարձրացման և վայելըների համար։ Բայցառութիւնն, — անշուշտ, կարող է պատահիլ. բայց այլ բացառութիւնը չի յառաջանում իր դասակարգային դաշտակարաբանութիւնից, բայցառութիւնը հետեւանք է բացառութիւն կազմողի այն միջավայրին, որ նա ծնուել, ապրել և կազմակերպուել է, ուստի և ոտի պ ո ւ ե լ է դասակարգից դասակարգ անցնիլ, իր դասակարգից զուրս այլ դասակարգերի ըդ-

ձանքներն էլ ի նկատի առնել և երբեմն նրան յար-  
մարովիլ:

Ա՞վ է շահագործող ազգը:

— Դա մեր բուրժուատ, կատվարթալիստ, սեպհա-  
կանատեր, կրաքող, կողոպտող դասակարգին, է, — այ-  
սինքն էն ազնիւ, էն պատուաւոր հայ ազգը, որ  
կկողոպտի՛ բարով, կդողանայ՝ ողբարով — բայց այդ  
բոլորը արտաքին է: Իր էսութիւնն է ընչազրկել ո՛վ  
և մորթի ի՞նչ զայն էլ որ ունենայ: Ազգ, հայրենիք՝  
ամէն ի՞նչ սա ինքն է. ով իր դասակարգացին շահի  
շրջանակի մէջը մանի՛ նա էլ ազգի անդամն է, եթէ  
ո՛չ, ամէն ի՞նչ վերջացած է, որովհետև իրենից զուրս  
հայ ազգ զոյութիւն չունի:

Ահա՛ սրանք, այս տարբեր երեք ազգերն են,  
որ ի մէկ ձուկուելով կազմում են պաշտօնաւան, տի-  
րող հայ ազգը, ուրեմն և ազգի անունով վճիռներ ար-  
ձակողները, — այդ յաւակնութիւնը իրենք ունին:

Եւ ահա այս Ազգը կեղծաւորական մի իրարան-  
ցումի մէջ է մտել վերջերս, երբ ականջին է հասել,  
թէ Հայաստանում տիրում է սո՛վ, թշուառութի՛ն,  
ժողովրդի տտուար մասը զալթում է, թողած տուն ու  
տեղ՝ փախչում է օտար՝ հեռու երկիրներ: Ու այս Ազգը  
ի՞նչ է ուգում անել այդ արհաւիրքի, այդ քայլացման  
խուճապի առաջ. — ոչի՞նչ, նա տալիս է բառերի իր  
արգահատանքը, իր յաւակցութիւնը և երբեմն երբեմն  
էլ ուղրմութիւններ է ուղարկում յաւերը դար մա-  
ն ելու, վշտերը ամոք ելու համար: Բայց շըր-  
թունքով կարեկցութիւն արտայաշող այդ Ազգը ամէ-  
նից առաջ ինքն իրեն հարց պիտի տար՝ թէ արդեօք  
ինքը մի աստիճանով, մի մե՛ծ աստիճանով պատա-  
խանաւու չէ այդ արհաւիրքին, այդ քայլացմին,  
ինքը մասնակցութիւն չի ունեցել ընդհանուր կողոպու-  
տին, ընդհանուր յափշակութեան:

Տաճկահայր քայլացում է. բայց այդ ազօրուա-  
նից չէ, դա ունի իր յարաւու, իր մնայուն պատճառ-  
ները. մի՞թէ զուք չգիտէք զրանք. զուք չէք որ ոչ  
միայն մինչեւ վերջ խուլ ձեւացաք բո՞ղոքո՞ղ զո՞ղ  
ձայնին, այդ այդ ձանը ինեղիք ուղեցիք ձեր առ-  
օրեայ ընթացքով, ձեր զործունելութեամբ՝ ձեր եկե-  
ղեցիների, ձեր սրբութիւնների մէջ քարոզելով. դեռ  
միայն այդ չէ, զուք միայն բայցասական չէք եղել.  
զուք զրական ոյժ էք հանդիսացել տաճկահայր՝ աշ-  
խատաւոր, արտապլող ժողովրդի թուրք բռնապետու-  
թեան դէմ մզած կուկի մէջ. զուք ո՛չ միայն անտարբեր՝  
չէ զոք զիրք էք բռնել, ո՛չ միայն կրուսդ տարբին ոյժ,  
օգնութիւն չէք բերել, ո՛չ միայն ձեր ճիզը չէք միացրել,  
— այլ զուք յայտնապէս անցել էք Սութիւնի և նրա  
զործականների կողմը. զուք ո՛չ միայն մի կողմից  
կեղեքել էք հայ աշխատաւոր ժողովրդին և նրան  
համակերպութիւն քարոզել, այլև ձեր քասկների բե-  
րանը առա՞տ առա՞տ Սութիւնի առաջը բանալով նրան  
միջոց էք տուել իր ոյժերը կազզուրելու և մեղ՝ նրա  
բռնապետութեան դէմ կուռողներին հալածելու, ջնջե-

լու, վազրավատին ցրուելու: Ի՞նչ յաւակցութիւն,  
կեղծաւորներ, զուք վայելում էք ձեր յանածը, ձեր  
հացրածը: Վրուկում է ձեր խիզձը, ակելոծում է  
ձեր սիրտը, — բողոքով, կոռուող, արեան Ճանապարհը  
բանող ժողովրդի կողմը անցէք, ոյժ տուեցէք նրան,  
որպէսպի տապալուի բռնութեան այն ամրոցը, որ անպա-  
կաս է անում թշուառութեան, յաւերի այն անհունու-  
թիւնը, որի առաջ ձեր կոճղացած խիզձն անգամ  
երբեմն երբեմն շարժուել է սկսում: Տաճկահայրն  
օգնել էք ուղում, — միջամտեցէք նրա քաղաքա քա ա-  
կ ա ն կ ո ո ւ ի ն, բերեցէք ձեր դասակարգի էլ օգ-  
նութիւնը, գէթ այնքանով, որքան որ ձեր դասակարգի  
շահն այդ կարհանջէր, եթէ ծալքայել եսասէրներ  
զուք չէք: Բայց կանէք այդ. արեցիք անցեալի  
մէջ: Մէ և ո՛չ: Երբ ո՛չ, ուրեմն, կեղծաւորներ,  
ձեր այդ վայնասախն միայն արհամարհանքի մայսին  
պիտի բաղիսի: Ժողովուրդը, աշխատաւոր տարրը գիտէ  
իր անելիքը, նա իր Ճանապարհով կերթայ առանց  
ձեղի: Եթէ նա զեռ կատարեալ գիտակցութիւն չունի  
որ զուք էլ, ձեզանից ամէն մէկն էլ մի սուլթաններ  
էք, նա մի օր այդ գիտակցութիւնը կունենայ, ամա-  
հով եղէք այդ մասին, և վա՞ց ձեզ այն ժամանակը:

Կովկասի շատ զիւղեր սովի ծիրաններում թիրը-  
տում են, յարի գաւառավեսներն անգամ « ողորմնած՝  
մարդոց » ուշալլութիւնն են հրաւիրում նրբերին և  
անօդնականներին ձեռք կարկառելու: Ու մեր բաւր-  
ծուապիան իրեն բո՞ն ադատուած է տեսնում գէթ  
մի բան աներու. անշուշա՝ մեզալրանքի ամբողջ բերը  
ծանրացներով ո՛չ իր, այդ ուրիշների վրան: Թողնենիք  
առայժմ բիւրօկրատիայի և յարիզմի պատասխանաւու-  
թեան բաժնը, բուրժուազիան չէր ցամկանալ ինքն  
իրեն մի փոքր հաշիւ տալ, թէ այդ տառապող վայերի  
աշխատաւորների քանի՛ քանիսի՝ ձեռքերն ու ուրքերն  
է կտրտել տուել իր մեցնաներով. քանիներին որբ,  
անտէր, անօդնական է զարձել՝ նրանց պահանողնե-  
րին իր գործարանների խեղզիչ մթնոլորտի մէջ սպան-  
նելով: Յաւերու ջի՞ղ է ցոյց տալիս ինքը. բայց չէ  
որ այդ անպաշտպանների հայերի, եղբայրների ար-  
տապարած աշխատանքի պատուից զրկելն է պատճառ,  
որ հաղարաւոր ընտանիքներ սովի և թշուառութեան  
մէջ են տապատկում: Իրենց խիզձը աւելի թեթև չէր  
լինիլ, եթէ մի փոքր աւելի քիչ յաւելեալ-արմէցներ  
իւրացնէին, այսինքն աշխատաւորի վաստակից մի քիչ  
նուազ գորանապն: Հայ կարուածատէրն է ողորմածու-  
թեան բառեր խաղացնում, բայց չէր որ ինքը առաջն  
և էն մեծ աղղակն է եղել այն խեղզութեան, որի  
մէջ ժողովուրդը լուցում է:

Հայ բուրժուազիայի էղէօղովները, նրա շահերի  
հաւատարիմ հրաւարակախօսներն են վրդովլում. բայց  
ի զուք չէ այդ. ո՛չ, զուք կեղծաւորներ, զուք՝ ողորմ-  
նութիւն կաղմակերպուներ: Դուք որ թշուառութիւնը  
ճողութեան կողմին անհրաժեշտ զատողներ էք, դուք  
որ հզօրակոյնի իրաւունքի վաստավանն էք, զուք, որ

մարդկացին շահագործութեան արվարացնողն էք՝ ձեր  
բութ զըսով, զուք էլ սրտի զառնութիւնն էք զգում,  
եղբ թշուառութեան ծովն էք տեսնում ձեր առաջ, բայց  
դա ձեր իդէօլօգիացի արդիւնքն է. զա ձեր ցանկա-  
ցածն է, ձեր որդին, ձեր գաւակը, ձեր արտադրամը,  
ձեր փրձն է: Եւ երբ դուք ստեղծում և վաւերա-  
ցնում էք մի զրութիւնն, որի անմիջական պատաս-  
խանատուն դուք և ձեր գաւակարգն էք, — այն  
ժամանակ ձեր կերծարուական վաճառքն ըստքուազա-  
կան մի ճիշ էլ կմնայ, ճիշ, որ արձակողն խսկ զար-  
չոյըսում է կեանքի իր տարած ցաղթութիւնից, իր տի-  
րապետութիւնից, իր քաղաքակրթութիւնից:

Փաշա, էֆենդի, գեներալ, պետական ամեն պաշտօնեաներ, ցարի և սուլթանի գրան ամեն սպասաւրիներ՝ սրանք. Բոլնապետութեանց բոյնի մէջ եղող այն որդերն են, որ ուսում են ժողովուրդը:

ԲԵԿԵՐ, ազաներ, կալուածատէրեր, կապիտալիստ-ներ, ամէն՝ վասակարգի բուրժուաներ՝ պանիք բոլորը աղջուելն ել են:

Եկեղեցական պատակարդ — սա ամէն ուտողի բաժնեկիցն-է, ամէնի էլ ընկերն է, ամէնին էլ օրհնող, միայն թէ իր ճառնակ ցութիւնը չձերծուի:

Աղքեր և ժողովուրդներ շահագործող դասակարգի  
կարեկցութիւնը, ցաւակցութիւնն անզամ եսական շահի  
արդիւնք է : Նահագործան շերեփը՝ ձեռքին՝ տո-  
առաւելն արհամարհանքի փշբանքներ ունի նա նետե-  
լիք, մինչդեռ այդ փշբանքներն իսկ գողոն են:

Ես բարորից յետոյ, դու՝ աշխատաւոր, դու՝ արտապլով, դու՝ պրօլետարիատ դասակարգ, լինիս Տաճկառանի մէջ, լինիս Կովկասի մէջ, երկու տեղ էլ Ա զ գը ուտող, երկու տեղ էլ Բունապետութեան աղբակների հետ քո ուսիր վրան հեծնող դասակարգերից դու սպասելիք չունիս, քո փրկութիւնը պիտի գայ միայն և ծիայն քո դասակարգից, այսինքն քեղանից։ Այն օրը՝ երբ դու քո դասակարգացն շահերը հշամկանա, դու արդէն քո աղատազրութեան առաջին անկիւնաքարը դրած կլինիս։ Հեռո՛ւ քեզ՝ այդ դասակարգերի հերոսներից, նրանք քոնք չեն, նրանք քո դասակարգացն գիտակցութիւնը մթնացնողներ են։ Դու ի՞նչ ունիս անելիք։ —Եթէ ոչ ճանաչել շահագործող Ա զ կի իրական վերաբերմունքը դէպի քեզ՝ շահագործուղի, և դասակարգացն կրուանի վրաց կանգնած՝ ձղել քո քաղաքական կանոնը և տնտեսական կանոնը՝ միացէք» Նշանաբանը՝ «Բո փրկութիւնը, քո աղատազրութիւնը միայն և միայն քեղանից և քո ձեռքովդ պիտի գայ, իսկ այդ կլինիս միայն այն ժամանակ, երբ արտասպառութեան գործիքները և փոխանակութեան միջացները աճբոլջ ընկերութեան սեպհականութիւնը կդառնան և դու քո Հայրենիքիդ այլւա ո՞չ թէ խորթ, այս հարազատ, բաժին ունեցող գրաւակը կը դառնաս։ Իսկ մինչ այդ կրկ:

# ԹԵ ԻՆՉ Է ՍԱՎԱՐԵՑՆԱԽՄ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Արտապրոյլ (գործառոր դասակարգ, պրովետարիատ) դասակարգի աղջուազութիւնն մարդկացն ըոլորէակների աղջուազութիւնն է՝ հաւասարապես սուանց սեօփ և ցեղի խորութեան:

Արտադրողները ապատ կիմնեն ճիշտցի այն, ժամանակ, երբ  
արտադրութեան բոլոր զորքիների և միջոցների  
(հող, գրիծաբան, մեքենաց, նաևեր, երկաթուղի-  
ներ, բանկեր, վարկացին ամեն հաստատութիւն-  
ներ, ևայլե,) աէրը իրենք կիմնեն:

Արտադրութեան գործիքները երկու ձևով կարող են  
պատկանել արտադրողներին.

Ա: — Անհատական սեպհականութեան ձևով: — մի  
ձեւ, սակայն, որ երբէք զոյսովիւն չի ունեցել  
որպէս ընտհանուր և համատարած իրազավիւն:  
Սեպհականութիւնն այդ ձեւը՝ կապվածալիս-  
տական ճարտարագործութեան աղղեցութեան  
տակ՝ հետզհետէ յապաւուելու, կրծանուելու  
վրայ է:

Բ. — Հաւաքական սեպհամատիրութեան ձեւով: Կապիտալիստ ընկերութեան դարգայումը իր մէջ բռվանդակում, է այս ձևի սեպհամատիրութեան թէ՛ նիւթական և թէ՛ մտաւոր տարրերը:

Որպէսզի արտադրութեան զործիքների ընկերականուց ցումը տեղի ունենաց, անհրաժեշտ է որ պրոլետարիատ դասակարգը կազմակերպուի լնչպէս ուրոցն քաղաքացը կը լավագութեան մեջ մեջին և իրեն առաջադրի յեղափոխական զործունեութիւն:

Արակէս ուրոյն քաղաքական կուսակցութիւն, պլոյետա-  
րիատը պիտի աշխատու նախ քաղաքական իրա-  
ւունքներ ձեռք բերել, ապա քաղաքական իշխա-  
նութիւն, —, տիրապետել ալ ե տու թիւ իւն ը-  
և յեղ ափոխ ե Ներկայ ընկերացին կամ ընդը-  
համաձայն իր բուն նպատակին, այն է արտա-  
զսութեան գործիքները և միջոցները՝ հաճայն  
ընկերութեան սեպհականութիւններ դարձնել:

— Հնկերաբանական վիրջին հետախուզութիւնները ցայց  
են տալիս, որ ճարդկային ընկերութիւնները լիւենց ընկերական  
կեամբը սկսել են հողի և նրա արտապատճեան հաճաշնա-  
կան աիրապետութեամբը:

Կան երկրներ, ուր ընկերացին զարգացման պատճական այդ շրջանը եւս չի զոցուել այդ տեղերում համայնտկան հոգա- տիրութիւն տակաւին, գոյսութիւն ունի որոշ շահիսվ:

Համայնտիկան Հողատիրութեան նախկին ձեւը գետ ույսւ-  
թիւն ունի Թուաւատանում, Զավա լրգում և Հիւմիսայցին  
Աֆրիկայում՝ արաբական Կաբիլ ցեղի մէջ, ևազնու Մ'ջանկեալ  
կերպով ասենք որ հոդի համայնտիկան տիրապետութեան ացք  
ձեւը քայլայուելու վրայ է ամէն տեղ էլ:

Աւատմասիրութիւնները ցոյց են տալիս և՝ այն, որ անշատ ական և եպհ հականա տիրութիւնն ը երբ երեւում է, նա վերաբերում է բաց առաջի միայն անձնական կանոն կող ը ծածութիւն համար ը եղած առաջի ան երին: Օրինակ՝ սովաննուած կենդանիների խորիս (գաղաճների մորթը), պարասուած թշնամուց յափշտակուած կողապուտը, զանազան զարդարումներ, զենքեր, ևալին: Եւ այդ բոլորը անձնական ու պհական կանութիւնն են համարում, քանի որ կատար են իրավունք իրանին կար: Ճեռնելուց յետոյ այդ բոլորը թագուած են գերեզմանի մէջ, սեփհականատիրոջ զիակի հետ միասին: Հայոց պատմութեան մէջ Արտաշեսի թաղման պարագան բաւականին լւաւաբանում է մարդկայն ազգի պարգայման այդ շրջանը՝ անձնական սեպհականատիրութեան նկատմամբ:

Աւրեանն ընկերացին կեսարիքի ծագման սկզբնական շրջան-ներում անձնական գործածությունը միաժամանակ թէ՛ պատճառ և թէ՛ սահման է եղել սեպական առիթը թէ՛ սեպական առիթը թէ անհանդակ է:

Հոգի և իր արտապութեան անհատական սեպհականաւոիրութիւնը, համեմատաբար, նորագոյն ժամանակների երեսով է:

Աւատական թէժիմի ժամանակ ամէն տեսակ հողաստվրերի ենթարկուած՝ հողային սեպհականութիւնը, որպէս անհատական անձեռնմխելի իրաւունք և ժառանիբերին բայցարձակապէս անցնելու մի առարկայ, իր օրինական տիրապետութեան մէջն է մանում 1789-ից յետոյ; Ֆրանսիական Մեծ յեղափոխութիւնը, հոգի անհատական սեպհականաւիրութեան իրաւունքը օրինազրելի մէջ տիրու օգի զարձեց և կազմակերպեց անձեռական սեպհականաւիրութեան այն թէժիմը, որի մէջ առջրում են մինչև յաշրդ կապիտալիստ բոլոր ազգերը: Անշուշտ՝ բոլոր ազգերի հողային ներկայ թէժիմի շրջանը 1789-ից չոկուեց. կամ երկիրներ՝ ուր շատ յետոյ տնտեսական այդ պրօյեկը կատարուեց. բայց բուրժուազիայի բացարձակ տիրապետութիւնը, քալազական և ամստեսական գեկավարիչ իր սկզբունքներով, սկսում է ֆրանսիական բուրժուազական առաջին Յեղափոխութիւնից. թէև մինչ այդ՝ նոյն այց սկզբունքներում կատարած էր Աներիկայի Միացյալ-Նահանգների Յեղափոխութիւնը, բայց նա չէր ունեցել հաճաշվարհային այն նշանակութիւնը և հետևանքը՝ ինչոր ունեցաւ ֆրանսիականը:

Այդ սկզբունքը սկսաւ բուրժուազիական արդի լնիկերացին կանոնաւորիչը գտնուալ, իր յետել ունենալով քաղաքական կեսնքի ամբողջ հաղմբ:

Եւ բորբոքաղական տիբրապետութիւնը, իր թէժինից անբաժան բռնի ծիջոյներով, խարեբայութեամբ, խարզախութեամբ, զօրեղին՝ ափրալին յատուկ ամէն զենքերով զինուած՝ ջանաց ամէն կերպ վերջ տալ հաւաքական. կամ հաճախնական սեաՀականատիրութեանը, ուր որ նա գոյութիւն ունէր.

Զնայելով տիրող դաստիարակերի այլ ձևին, այնուամենա  
նայնիւ անկարելի եղան բոլորավին կամել ջնջել հաւաքա-  
կան սեպհականնախարարութեան աճքող շականութիւնը՝ նոյն իս-  
բուրժուազական կուլտուրայի մայլ համարող երկրներում

Համայնական հոգերի, Համայնական խորատեղերի, պետական անտառների, "Խաղաղատեղեր"ի, և այլն, պյութիվներ որպէս մնացորդներ՝ դրան ապացուց:

Եւ աշա թէ ինցու համար Սօցիալ-Դեմոկրատական Կուսակցութիւնը աստվճ է թէ անհ ա տ ա կ ան ս ե պ հ ա

կանատի ըստ թիւնը, որպէս ընդհանուր և  
չամատարած մի լիովութիւն, երբէք տեղի չի  
ունեցել, և թէ առաջուածքների տարածերժուն անձ  
նական գործածութիւնը պաշուել, իրաւակարող է  
եղել ճիշճի այն ժամանակ, երբ ախրում էր փոքր ճարաւա-  
րագործութիւնը, արտավազութեան մանր եղանակը: Իր սեպ-  
հական արտարաքը վարող ցանող վեղացին, իր բարովկ-  
ներով հինուղ գործուղ սսաւայնանիլը, իր երկաթագրչով և  
մուրճով գործող քանիքակագործը և քարտաշը, իր ներկի  
կարասի առաջ չսրուղ և իր վրձնով գործող ներկարարը,  
իր գուրով՝ շաղափուղ և ուրագով աշխատաղ հիւմը, իր  
կաշեզանակավ մաքրալ խաղախորդը, իր հերկւնավ և թե-  
րմվ գործող կօշկակարը—սրանը բոլոր ոչ ճիշճի անուա-  
նական կամ օրինական, այլ իրական սեպհա-  
կանատերեր էին, որովհետեւ նրանք անձանք էին գործածում  
իրենց սեպհականութիւնը և իրենց պարձիքները: Այդ գեպ-  
քում սեպհականութիւնը զօրուած, կցուած է սեպհականա-  
տիրոջ հետ, սեպհականատեր և սեպհականութիւն նոյնա-  
նում՝ միւնոյն անձի մէջ են արտացոլանում: Այսիւզ  
արտադրականութիւնը կախումն ունի արտագրովի, աշխատողի,  
գործաւորի, սեպհականատիրոջ ճարպիկութիւնից, նրա վար-  
ժութիւնից: Որովհետեւ մէկը առանց միսի չէ, և մէկի գո-  
յութիւնը միւսի գոյութեան պայմանն է, ուստի մինչ չի կա-  
րող վնասուել: առանց որ զրա անմիջական հետևանքը չանց-  
նէր միւսին: Թուլացած, ակարացած մէկը, — թուլանում,  
ակարանում է և միւսը այնքան որ սերտ են նրանց յարաբե-  
րութիւնը: Սեպհականատերերը այլ ժամանակ օգտակար դեր  
են ունեցել արտավազութեան մէջ:

Բայց երբ հողացին սեպհականութիւնը ընդարձակւում, մեծանում, աշագին չափեր է ստանում, երբ ծարտարագործութիւնը ձևափոխուում, խոշորանում է և հասարակ գործիքներին փոխարինում են հակայական մեքենաները ու մեքենայագործական աշխատանքը և աիրում է խոշոր արտադրութեան երանակը, — այն ժամանակ տակաւ առ տակաւ անհատական սեպհականութեան գործական, իր ական, օգտական և օգտական բնաւորութիւնը այլևս ձգտում է չըանալ, խապառ անհետանալ:

Երբ դիւլպացու առաջնուան ճի կոտոր հողի փոխարէն տիրում է հազարաւոր արտավար անարածութիւն ունեցող անշարժ կալուածած ա տի ի ու թիւնը և այլս սեղականատէրը չէ որ անձամբ վարում, ցանում, կալում և շտեմարանում է, այլ իր մարաբանէրը, իր ագարակապանները, իր օրավարձու աշխատաւորները և վարչակալները. երբ ձեռքով գրծածող դադիեահին փոխարինում է ձեքենայ-դադիեահը, խոկ ձեռքով շարժուող կասափ սանդղին՝ ձեքինայ սամսլը. երբ հասարակ սղոցի տեղը բռնում է ձեքենայ-սղոցը, սեպհականատէրը ո՛չ հիւսում, ո՛չ զործում և ո՛չ էլ սղոցում է, այլ այդ բոլորը անում են նրա վաքու աշխատուորները.—այդ ժամանակի ահա՛, սեպհականութիւնը թէև օրինական կամ անուան ական բայց սեպհականութիւնը այդ սեպհականութիւնն անձնական գործածում է առաջականատէրը այլս զարդարութիւն կարցը եւ: Այլ դէպքում սեպհականատէրը այլս զօդանա, կցուած չէ. իր սեպհականութիւնն հետո, նրա հետ նոյնութիւն չի կազմում: Արտավարականութիւնը, այդ վիպուածում, անկախ է. այլիս որ և է կախումն չունի սեպհականատիրոջ անձնական յատկութիւններից: Սեպհականատիրոջ պարապորդութիւնը, եերութիւնը, թուլութիւնը, բացակայութիւնը, Փիվքական և մտաւոր անկարսողութիւնը որ և է ազդեցութիւնը և կապ չունի արտապրայթի որակի և քանակի հետ: Փայթ չէ թէ սեպհականատէրը ընկողմանած է կամ խնչոյցի մէջ է, կամ շատ հեռաւոր վայրերում իր անձնական վայելքների

և շուայսութեանց յետևից է... այդ բոլորը կորեկի չափ հա-  
կաղեցութիւն չունի արտապրակտնութեան վրաց, քանի որ իր  
ն եք են ան եր ը և ի ը գործ աւուր ն եր ը անցուն են և  
պէտք եղած աշխատանքը կկատարեն՝ անդույս անդապար: Մեա-  
հականատէրերը այժմս ուրիշ ոչինչ չեն, անում, եթէ ոչ  
յա փշաւ կում, գորդանում են արտապրոցների, գոր-  
ծառների աշխատանքի արդիւնքը — այն գործասրների  
որոնց ձեռքին է սեպհականութեան գործածութիւնը  
բայց իրենք նրա ո՛չ անոււ անական և ո՛չ էլ օրի-  
նական սեպհականատէրերն են: Արտապրոցների աշխատանքը  
չէ թէ միայն արտապրում է այն բոլոր համարժեցները, ինչոր  
պէտք են նոյն այդ արտապրոցներին գոյութեան պայմաններ  
տալու, այլ ստեղծում է և այն բոլոր յաւել եալ-ար-  
ժէ ընել եր ը, որոնք կապիտալիստի շահի զանգուածներն  
են կաղմանաւ. խոկ այդ յաւել ել եալ-արժէքն եր ը, շահի  
այդ կոյտերը այնքան աւելի շատ են, որքան որ սեպհակա-  
նատէրը աւելի մեծ թիւ գործառներ, արտապրոցներ է  
պահում, որքան որ աւելի մեծ ստափութեան է հասցնում  
իր շահագրծութեան աստիճանը:

Կապվալիստի գերը այժմս վերածուած է շահի հաս-  
սարակ գողի, նա ուրիշ գեր չունի, այսպէս որ սեպհա-  
կանութեան անուան ական կամ օրինակ ան աերը  
այսօր Կիրակոսն է, վաղը կարող է լինել Մարկոսը, — ձեզ  
սեպհականաւէք կարող է ծիւսին փոխարինել, բայց դրա-  
նով սեպհականութիւնը ոչ նուազ արտօվդրող կիրառույ-  
և ոչ էլ իր բնաւորութիւնը կփոխի, նաև կշարունակի յա-  
ւել եւ ալար ժէ քն եր բերել: Կապվալիստը այժմս կա-  
րող է նոյն խոկ իրականապէս չլինել, բայց դա արդիւը  
չէ որ նը սեպհական ութիւնը դադարի և ընկե-  
րացին ներերաց սիստէծի ձէց, իր կապվալիստական գերը  
չկատարի: Հանճեր, երկաթուղիներ, նաւեր . . . որանց  
բարով ախաղասաւոր սեպհականաւէքերերը ան ան ձն ական  
են, այդ սեպհականութիւննց օրին ական սեպհականա-  
ւէքերը օրը մի քանի անդամ Սակարամուած կարող են փոխ-  
ուիլ, ձեռքէ ձեւք անցնիլ, բայց դրանով ոչ մի հետե-  
ւանց չի յառաջանալ արտավարութեան տեսալիսակից:

Եւ այց ի՞նչ է ցոյց տալիս, եթէ ո՞չ այն, թէ անհասական ու եպշականատիրութիւնը հետղհետէ իր բնաւորութիւնը կորցնում է, այսինքն՝ ո ե պ հ ա կ ա ն ա տ ի ր ու թ ե ա ն ա ն հ ա տ ա կ ա ն ձեւը տակառ առ տակառ յապաւում, կ ը ճ ա տ ւ ո ւ մ է՝ ժ ա մ ա ն ա կ ա կ ի ց ճ ա ր բ ա տ ա ր ա գ ո ր ծ ո ւ թ ե ա ն ա զ գ ե ց ու թ ե ա ն ա տ ա կ:

Ճարտարագործական այն յառաջապիմութիւնը որ ճպառւմ  
է, անհատական սեպհականատիրութեան ձեւը ջնջել, նա լիբո՞ւ  
էլ ծշակում, հասունացնում է սեպհականութեան ծի ա՞յլ՝  
անելի բարձր ձև, այն է հաւաքական, ընկերութիւն և սեպհականատիրութեան ձեւը, և սեպհականատիրութեան այս  
նոր ձևի նիւթական ու մատաքրութեան արդեն լի ու լի  
կերպարվ գոյութիւն ունին կապիտանվաստական բէժման ընկե-  
րութեան ծոցում:

Երբ նախկին արօրին և գութանին փոխանորդեցին շուզ-պետքը, հնձող, ծեծող, քանու առևող ծերենաները — երկրագործութիւնն էլ հետզհետէ կապիտալիստական շահագործման ըքչանի մէջ պիտի մաներ և ճապոնարազործութիւն (S'industrialiser) սկսէր, թէև շատ յաճը և գանդաղ կերպով նթէ հողացին կեղլունացուը արագ կերպով չի կատարում, դա ունի իր սրոշ պատճառները:

Արտապրայթեան ձևափոխմթիւնը շատ աւելի արագ կերպով կատարուէց Ճարտարագործութեան ճէջ՝ թէշուն, ճախարակին, աղացին և ընասնեկան ուրիշ գործիքներին՝ որոնք կարուլ էին անհաստի կաղմացից սեպհականացնուելը՝ յաջորդեցին Համբայ ճանաբանները, ճռվարանները, սղագարանները . . .

միակ ազգակը, նա ինքը վարում, ցանում, կալում  
էր: Որթառումնելը յօտելը, այզին կթելը, պինին շինելը—դրանք  
բոլորը այցեղործի իրեն գործն էին և իր բաղադրիչներն էին  
բոլորը անողը. տափառակները կտրովը, կարամիթի ձևեր տը-  
ւովը, զանազան կտորներ իրավու ճառ բերող և մէկ ամբող-  
ջական առարկայ պատրաստավը նոյն ինքն կահագործն էր:  
Այգաէս չէ; սակայն, կապիտալիստական երկրագործութեան  
և ձարսարագործութեան մէջ, այնտեղ ամէն ինչունի իր բա-  
ժանումները և սոսորաբաժանումները, ու այդ բալորը կատար-  
ում էն միաժամանակ, միատեղ և ամբոյ ծի խմբի գործակ-

յոթեամբ: Երկրագործական խոշոր ձափառթիւնը պահանջում է քիմիկոսներ՝ հաղերը և պարարտացուցիչները վերընդելու համար, ճեքենափարմեր՝ շողեարօնները վարելու համար, մասնագետներ՝ սերմերի ընտրութեան համար, և այլն, և այլն: Այս արտադրողներից ամէն մէկը առանձին վերցրած չի կարող լինել միասի գործել և աճբողջ արտազույթը յառաջացնել: արտադրութիւնը ունենալու համար դրանցից բոլորն եւ պէտք են, բոլորի էլլորդակայցութիւնը հաւասարավէս անհրաժեշտ է, և ամէնքն էլլորշ չափով, մաս ունեն արտադրութեան աճբողջութեան մէջ, այնպէս որ չի կարելի ասել թէ ո՞վ ի՞նչ բաժին ունի և որոշեալ ի՞նչ քանակութ է աջակցութիւն ունեցել ստացուած աճբողջութեան մէջ: Մէկ մէտր մահուղի մէջ ի՞նչպէս որոշել թէ, ո՞րն է ճեքենափարմի, հնոցպանի, վարկեցուի, տնօրինի, հասարակ բանուորի և գործող-հւասողի բաժինը: Ակնյայսնի է որ զա անկարելի է: Եւ առկայն այդ բոլոր գործադրները անհրաժեշտ են մահուղի այդ մէկ մէտրի արտադրութեան համար: Պորճաւորական այդ առլրեկը կատեգօրինները (դասակարգութիւնները) այնքան անհրաժեշտ են, որ նրանցից խրաբանչւրը չպիտի կարողանար որ և է մի բաժին դրծ կատարել, եթէ ինքը

ծիմսակ մնապ և ամէն ինչ իր սեպհական քմահաճախցովը և յանկութեանքը տուաջ երթար երթ ժամը եօթին՝ գործող-հիւ-սովոները իրենց գոզգեահի գլխին են կանգնած և շոգիի ոյժին են սպասուած աշխատանքը սկսելու, այդ ժամանակ անպայման պէտքականութիւնն կայ որ հնոցպատն էլ նոյն այդ ժամին իր գործի գրտին անյած լինի, որպէսզի ընկհանուր աշխատանք սկսելու և ամէն նամիկ իրեն համար որոշած գերը կատարի՝ ամբողջութիւնը ստանալու համար. Նորագոյն արտադրութեան մասին գաղափար չունեցողը միայն կարող է կարծել թէ հակայ մերենաներով լիցուն գործարանների մէջ աշխատանքը կարելի է վերսկսել կամ գաղափարենել մէկի քմահաճածոյթին համեմատ. Ներկայ արուեստանոցի, գործարանի դռան առաջ, դեռ շէճը չանցած և գործի չսկսած, ամէն աշխատաւոր՝ անօրէն, մերենավար, հասարակ բանուուր, բոլորն էլ մի կողմ են թողեւում իրենց սեպհական կամքը և իրենց անհաստակմութիւնը, ու ամէնքը մէկտեղ գումանում են մի մեծ մէխանիդոմի (կազմաւորութեան) գանագան մասիքը; Մեխանիզմի ամբողջութիւնն է որ մասնիկներին տիրապեսում նրանց շարժականութեան մէջ է զնում և, ուղղութիւն տալիս. — մասնիկները առանց ամբողջութեանն, ամբողջութիւնը առանց մասնիկների չեն կարող գործել և արտադրությունը յառաջնորդել: Համայնական կամ հաւաքուկան գործունէութեան անհրաժեշտութիւնը մի կողմից, գանագան աշխատաւորների իրարուց սերտօրէն կախումն ունենալը միւս կողմից՝ զբանիք սեպհականութեան հաւաքական մէկ այն ծառաւոր տարրերը են, որ ծագել, բեղմնաւորել են նոյն ինքն կապիտալիստ ընկերութեան գարգացումից: Բայց դա միայն չէ:

Նորագոյն արտադրութեան բնախութիւններից մէկն էլ այն է, որ արտադրվէ ոյժերի գեկավարչութիւնը անցել է ո՛չ-սեպհականաւուերերի, պրոլետարների ձեռքը, ինչպէս են՝ ճարտարաբէտները, քիմիկները, անօրէնները, վրակիցուները, բանուորապիտները, ևայն. մի խօսքով՝ ճարտարաբարձութեան ամբողջ ու պայ յ ա կ ո յ ը դուրս է բերուում նոյն ինքն վարձուորների զանգուածից: Գիտական ի՞նչ զարգացման, կրթական ի՞նչ աստիճանի և անձնական ի՞նչ արժանիքի ամէր էլ որ վնանն այդ աշխատաւորները, աշխատամինայնիւ որոշ է այն, որ տնտեսական այր բոլոր գեկավարիները ո՛չ այլ ինչ են, եթէ ո՛չ վ ա ը ձ ը ւ ա ծ ն ե ր, նոյն այն տիտղոսով, ինչոր են բոլոր միւս վարձագնի աշխատաւորները, որոնց ուակայն, նրանք հրամացում են և երեմն էլ նրանց վրայ բարձրից նայում ու յաճախ էլ արհամարհում: Այդ երկու տեսակ վարձագնով աշխատաւորների մէջ ծիստ արհամարհում նոյնութիւնը նրանց սուացած վարձագնի քանակի մէջն է, — մէկը աւելի, միւսը՝ պատկառ ուրիշ ոչինչ, երկուսի էլ էսութիւնը նոյնութիւն է կազմում Որբան որ այբակիները սպասաւորներին յատուկ ժարդութեամբ վերաբերուին դէպի իրենց աշխատակից ընկերները դէպի նրանց՝ որպնի օրական հաղիւ 3-5 ֆրանկ են ստանում — և վարձագնի գումարի այդ զանազանութեան մէջն է զրոնը ուրած միայն երկու կատեգորիաների (զասակարգութիւնների տարրերութիւնը, — յնուածմէնայնիւ վա արգելվէ պատճառ չէ որ նրանք իրենք են, իրենց միւս ընկերակիցների նման վարձու բանն ու ու բան ե ր ն ե ր ը մինեն պրոտարոյծ սեպհականաւուերի և միանանաւուների, ու բոլորը միայն՝ անխափի իրենց վարձու ու զն ե ր ի քմահաճածոյթին և շահի օրէնքի չստորադասուին: Եւ այն իրազւութիւնը, որ արտադրութեան թէ՛ ծառաւոր և թէ՛ մ կ ն ա կ ա յ ի ն տ ա ր ը ե ր ս պայմանը են պրոլետարիատից, — լա պարզ ցոյց է տալիս, ու սեպհականաւուերի, կապիտալիստների ամբողջ զամակարգ կարող է մէկանց չքանալ և նրանց սեպհականութիւններ կարող են ընկերացին կամ հաւաքական զանալը առանց որ ափակիսութիւնից արտադրութիւնը որ և է չափով վեասուէ

Ա ձ փ'ո փ ու ձ ն. — Մարդկայն ընկերութիւնների սկզբանաւորման օրերին գոյալթիւն ուներ համայնական կամ հաւաքական սեպհականատիրութեան ձեւը: Անհատական սեպհականատիրութիւնը տարածում է, առաջին անգամ, անձնական գործածութեան համար եղած առարկաների վրայ ճիշայն, ինչպէս են զարդարանքներ, գենքեր, և այլն: Այսուհետեւ անձնական սեպհականատիրութիւն են զառնում բնակութեան վայրը, տունը, մշտիկելի հողը, գործիքները և կապիտալը: Անձնական սեպհականատիրութիւնը իր բացարձակ, տիրասպետութեան մէջն է մտնում այն ժամանակ, երբ բուրժուազիան անցնում է ընկերութեան զլուխը և ինքն է սկսում դեկալարել: Կապիտալական, բուրժուազիան ըէժինը, որպէս մարմաւացութիւն անհատական սեպհականատիրութեան, անդարձար կրիւ է մղում նախնական հաւաքական սեպհականատիրութեան ձևի դէմ յիտ է մղում, բայց անկարող է լինում չքայնել և բոլորավիմ վերացնել:

Անհատական սեպհականությունը որպատ որ տարածում է, նրա անմիջական հետևանքը այն է լինում, որ սեպհականութիւնը սեպհականատիրոջ գործածութեան համար չի մնում, այլ վարձու աշխատաւորների: Սեպհականությունը անու ան ակ ան կամ օրին ակ ան տիրապետութեան իրաւունքը իր ձեռքին պահելով մնում է միայն օրին ակ ան դողը այն աշխատաւորների աշխատանքի, որոնք նրա սեպհականութեան գործածութիւնը իրենց ձեռքին ունեն և արտապատճեն, ստեղծում են ամբողջ հարստութիւնը, որի ծի չէ չն ձաւը գնում է այզ աշխատաւորների գոյութեան պահպանութեան համար, իսկ մեծ մասը նոնցում է օրինական գողի սեպհականատիրոջ գրապանը, իր շահագործութիւնը և՛ս աւելի խստացնելու և ծաւալելու համար:

Այսպիսով՝ անհատական սեպհականատիրութիւնը գոյութեան ամէն իրաւունք կրցնում է՝ և դառնում է անպէտք, միասակար:

Միւս կոզմից, որոշ է և այս—որբան որ անհատական սեպ-  
հականաւիրութիւնը տարածւում է, նոյն այդ անհատական  
սեպհականութեան գործածութիւնը հետզհետէ հաւաքա-  
կան՝ համայնական ձև է տառնում: Ներկայ սեպհականութիւնը՝  
արտապրութեան համար սլահանջում է թէ՛ ձեռքի և թէ՛ մտքի  
աշխատաւորների հաւաքական գործակցութիւնների հաւաքական  
տեղի է տալիս ընկերացին կամ հաւաքական սեպհականաւի-  
րութեան մի նոր և աւելի բարձրագոյն ձևի, որ կաղզակերպ-  
ւում է ի մեսս անձնական սեպհականաւիրութեան, — Ճիշդ  
այնպէս, ինչպէս որ անձնական սեպհականաւիրութիւնը  
կազմուեց ի մեսս սրբաւիրան հաւաքական սեպհականաւի-  
րութեան:

Արտադրութեան և փոխանակութեան միջոցները (գործարան, հող, հալորդակիցութեան և վարկային հաստատութիւններ, ևայն), շետքետէ հաւաքական են դառնում իրենց գործառութեան տեսակէալից և, ըստ հակառակը, նրանք շարունակում են անհաստական լինել սեպ շականացան տեսակէտից, այդուեղից էլ յառաջանում է երկու նշանակալից շետքետթիւններ. — մի կողմից՝ արտադրութիւնները դիվում, կուտակւում են ոչ-արտադրիչների, կապիտալիստների, սեպհականատէրերի ձեւեքը և ծիւլ կողմից էլ, ոչ-սեպհականատէր արտադրութիւնի թշուառութիւնը աւելի ու աւելի բազմապատկում, ահռելի է դառնում, ինչը արտադրութեան քանակը աւելանում է:

Այս հանգամանքը, որ աշխատաւորները իրենք տէրը չեն այն գործիքներին, որ հաւաքաբար գործ են տծում, ուստի և իրենց ստեղծած հարատոթիւնները դուրս են դալիս իրենց ձեռքից և մտնում կապիտալիսանների գրպաննուն Իրենց ըստեղծած հարատոթեան կոյտից գործաւորները ուսանում են

միայն աղքան, որքան որ նուազագոյն չսպալ անհրաժեշտ է իրենց կեանքի պահպանութեան և սերունդ արագղելու համար, և այն ել կա, որ կապիտալիսար աշխատում է որքան կարիքի է պահպանել գործառորի վարձադիմի, այսինքն նրա գոյութեան պահպանութիւն չսպե՛ իր շահը, իր օրուափ գումարը աւելի խօսքացնելու զիտուածով:

Դրա համար է, որ սեպէշականատէրերը աշխատում են, որքան կարելի է, աշխատանքի ժամերը երկարացնել. ու նըրանք այնքան աւաշ գնացին, որ ծինչեւ անզամ բոլորուա, բռնապետական կառավարութիւններն անզամ սովորուեցան ծիջամը և լուսական կ թոյլ չտալ որ ճարդկացին ոյժերի վատնաւմը անսահման չափով աւաշ տարուի: Ճարատարագործների մէջ գոյսթիւն ունեցող ճրցման կամ կրտսէ ընթացրում, ամէն ոք չանք է թափում որ յաղթանակը ինչը ասնի, բայց յաղթանակ տանելն էլ կախումն ունի գործառներից՝ որը ան կարելի է շատ մեծ քանակութեածք անվճար աշխատանքներ ստանալով՝ որպէսափ իր հաշտաբն եղող արմէշվինը պակասի ու այլպիսով՝ կարող լինի աւելի արժան ծախսել իր ապահովքը, այմինքն յաճախտարուների մենաշնորհը իրեն համար ապահովել: Ուրեմն մի գործառէր, մի խառշվին, որքան որ "բարի ձարդ" լինի զարձեալ չի կարող, մի նուազագոյն չափից զարս, բարւոքել զարձարանների վրութիւնը, եթէ յանկանաց իսկ: Բայց կապիտալիստները ո՛չ միայն կարելութեան փոքրիկ ստհմանի մէջ եղող, իրենցից կախումն ունեցող բարւոքառներն անզամ չեն ամում, ըստհմակառակը՝ նրանք աւելի յաճախ ծանր խօսքերով և հացհայանցներով են պատասխանաւմ զարձաւորներին, երբ սրանք պահանջները յատնում, մեղադրելով որ ցոյցերով և նորանոր պահանջներով կարծնում:

Բանալու կարելու համար՝ կապիտալիստները զործաւորների բնականեկան օջախն ի՞նկ կրծանիցին Նրանք տանից զործարան տարան ո՛չ միայն ճօրը, կնոջը, այլև երեխային էլ. Եւ այդ նրա համար, որ կինը և երեխան աւելի արած առ դին գործին գործին եր էին արտավառութեան համար, քանի այլ ճարպը, քանի հայրը. Գործառները, զուու իրենց շահի կոյսու աւելոցներու աեսակեւալից, մի կողմից ընտանիքն յարկը քամուկերպ՝ չյարգեցին ո՛չ սեռ և ո՛չ տարիքը, միւս կողմից էլ՝ բուրժուազիան ճարպակիրութեան գեղասոմներ և բարոյականութեան խրատներ սկսեցին ուղղել այն գործաւորներին, որնց քայլայելու և որնց ընտանիքը վշացներու առաջին պատճառը հենց իրենք էին դարձել. իրենց շահը աւելացնելու համար:

Նիթացքի ժամանակ էլ վարձագները կոտրել և աշխատանքի ժամերը երկարացնել, — չշամաձայնողին կայ վարումն, իսկ ինքը դործող-ձեռքի ներութիւն չի քաշիւ որսվհետեւ պահ և կ բան կ լի յ ուղած չափով կարող է ըստանալ: Եթէ այդ էլ ընթի, կապիտալիստը մի բողէ անգամ չի տպանամիլ զիմել օտար բազ ի գործաւոր ներին, պրոնց կուզէին աւելի ցածր զնով աշխատել քանի հրամարին ցեղակիցները” ու այզպիսով բանողչէքը ցածրացնել և իր “Հայրենակից” ներին տուածահ անել, — ըստիսկել անձնատուր վնել: Կապիտալիստը շատ սիրում է “ազգասիրութիւն” բառը հորովիլ յաճախ իր “ազգասիրական” շահագործումը առաջ տանելու համար, նա որ “միջազգայնութեան” դէմ է, որութիւնը միջազգայնութիւնը, իր համայածին նայելով, ազգային գոյութեան դէմ է, ինքը առաջին “տպապգայնականը”, առաջին “միջազգայնական” նէ վնում, երբ ինդիքը զալիս է իր շահի մի քանի կօպէի աւելի կամ ուսակա վնելու մասին: Նա “ազգասէր” է, երբ շահ կայ, “միջազգայնական” է, երբ զարձեալ շահ կայ, մի խօսքով ամէն ծագումից, ամէն ցեղից եղող, համաշխարհային մի էակ է, որ ամէն ինչ է, և պատրաստ է ամէն ինչ վնելու, միայն թէ շահ՝ “շահ”, “շահ” վնի: Կապիտալիստի հոգին շահն է: “Ազգ”, “Հայրենիք”, ամէն ինչ օպւու ”ի, “շահ” ի մեծ ու փոքր գումար ասել է:

Հսկայ մեքենաները, իրենց գործած հրաշալիքներով, հարթւրապատկեցին արտադրոյթի քանակը, սրբը և հարթւրապատկեցին գործատիրոջ շահի գումարը, բայց արտադրուներին, աշխատաւորներին բերեցին միայն յաեկեալ աշխատանքներ և զրկանքի աւելի մեծ զանութիւններ: Որքան որ գործաւորները աւելի մեծ քանակի վեճամք հարստութիւններ ստեղծեցին իրենց տէրերի համար, այնքան էլ աւելի մեծ թշուառութիւնն ստեղծեցին իրենց համար: Իրենց արտադրածի և իրենց զայութեան համար սպաւածի տարբերութիւնը թէւա ահազդն էր, բայց նրանք միայն պիտի ստանային այնքան վար ձագին, որով հազիւ հալ կարող էին իրենց զայութիւնը պահպէս առանց կարողվներու իրենց արտադրածը գնեւու, ինչքան էլ որ շատ արտագրէին:

ՊրօՓէսիօնէլ (արուեստագիտական) կրթութիւնը ինչքան էլ որ ընդհանրանայ, նրա հետևանիքը այլապէս չափավի ազդի գործառականաթիւնն վրայ: Մի անգամ, երբ գործառոր գասակարգը զրուած է արտադրող գործիքի զրութեան մէջ և այդ զերը նա միայն ունի այժմս, ուստի որպան էլ որ պրօՓէսիօնէլ կրթութիւնը նրան միջոց տայ՝ ժամանակի միւնոյն միութեան մէջ՝ արտադրելու հարստութեան նոյն քառակից՝ և նոյն սրակը աւելի նուազ ժամանակի մէջ և աւելի նուազգ բազուկների միջայով, զրանից օգտառով ինքը չէ, այլ այդ գործիքը իր ձեւքին ունեցողը: Կրտագրութիւնը՝ այդ զէպըում, կրտագրապատկուի ամշուշու, բայց դա կլինի յօդուած սեպհականատեր, կապահավաստ գասակարգի, և ո՞չ թէ յօդուած գործառոր գասակարգի, որի վերջակէտը այն կլինի, որ աւելի մէծ թուով բազուկներ անցորդ կինան և բանին գութեան թիւը աւելի ու աւելի մէծ կլինի:

Միենայ երևոյթը տեսվ ու աւել առ զիմբ։  
Միենայ երևոյթը տեղի պիտի ունենայ բոլոր այլ յառաջալի մութիւնների նկատմածք, ինչ կարգից էլ որ դրանք վնան։ Ամէն յառաջալի մութեան արդիւնք իր անձիշական հակահարուածը պիտի ունենայ ի վեսա գործաւորների, ու այդպէս կուել մինչև այնքան ժամանակի, որքան որ վարձարութեան եղանակը կտիրի, այսինքն գործաւոր դասակարգը արտադրու գործիք կիմայ սենչափանատէր, գործատէր գաւակարգի ձեռքին և նրա աշխատանիքի գործիքը կհանդիսանայ — այսինքն մինչև այն ասեն, երբ գործաւորները ա է ը և տիրող չեն լին իլ արտադրութեան և փոխանական առ առ թեան և փոխանակութեան միջոցների հաջողութեան, որ է Հոգի։

զործարանի, նաւերի, երկաթուղիների, համբերի, բանկերի և մարկարան ամէն հասառատթիւնների, և այս:

Արտազը կասկարդը, առանց յեկալի  
ձագման և սեւի խորովթիան ազատ կլինի,  
— այսինքն իր սեպհական տէրը ու իր գործունէութիւնից  
ծնուած, սուեկածուած գործերի տէրը կլինի—այն ժամանակ, երբ  
նա կչնչի արտազը ութիւն միջոցների անհատական սեպհա-  
կանասիրաթիւնը և նրա տեղը կինի հաւաքական կամ ընկե-  
րացն սեպհականատիրութիւնը:

Այստեղից որոշ է և այն, որ այդ ձևափոխաթիւնից միայն գրքաւոր դասակարգը չի ստանալ իր աղատութիւնը, այլ սեղհականատիրութեան այդ նոր ձևի շնորհիւ կ տ զ առ ա դ դ ու ի ա ծ բ ո զ ջ ընկերութիւնը։ Մի՞թէ, տյուր, ներկայ սիստեմի արտօննեալները — կապվաալսանները, անհատական սեղհականատէրերը — իրացնէ իրենք իրենց աղատ կարող են դրալ. բայց աղատ են նրանք: Իրուրա թիւնն այն է, որ նրանք աղատօրէն չեն կարող արանձադրել իրենց անձն խոկ, նրանք ել յաճախ սպառնալիքի ենթակայ են: Թշուառութիւնը, քբաւորութիւնը, որ գործաւոր դասակարգի անբաժան ընկերներն են, դրանք չեն որ ծննդում են հարիւրաւոր տեսակ տարափոխիկ Հիւանդանթիւններ. ճի՞թէ արտօնեալ դասակարգը հակահարուածը իր վրայ չի ընդունում: Մի՞թէ նրանք շատ սպահով են իրենց քաղաքական աղատութիւնների համար, եթէ այդպէս է, սպա ստուկանների, լուսների, հազար ու մի տեսակ մթին ոյմերի և գատաւորների վոհճակները ինչու համար են, նոյնը չեն ենդակարգային արբանատիւնը յարատե պահելու նպատակուած կազմուածուած գօրաքանակները. այդ առել չէ, որ կապվաալսունները բանակած են որպէս աւաղակներ և ամէն բուե սպառում են իրենց անարդար բաժնի իրենց ձեռքից գնարուն նրանք շատ լաւ գիտեն որ շահագործուող մասսան վազ՝ ուշ պիտի արթնանայ և իր իրաւունքների տէրը համալիսանայ Տիրող դասակարգերը պատճութիւնից շատ լաւ գիտեն, որ դասակարգային արբանատիւնը միշտ յողդող, միշտ երեսուն է, ուստի և շարունակական արհաւորքի մէջ են:

Ես ապահով են սելչակմասատէրը ըստ անալիմ կերպակ  
և արթշների աշխատանքի արդինքից յափշտակած իրենց  
գոյցի և կայքի ճառին. մի թէ մասնկութեան յարատու ուրաւա-  
կանը նրանցից մի բատէ հեռանում է. չէ՞ որ իրարու ամիկ-  
մանը աշխատող, իրար ատպալի ուզու ձրյակիցների թիւը  
շա՞տ շա՞տ է հրապարակի վրայ: Անդարոյականութիւնը  
իրենց շահու աղքեւը ամուղ բուրժուաները կարդղ են ապա-  
հով մինել իրենց ընտանիքի բարոյականութեան ճառին: Դեռ-  
արտապրատիւնը եթէ փոխոց է շաբառում զործաւորներին  
յաճախ պատճառ է դառնում, որ շահագործողները իրենք  
մոցնել տան բանատերի ճատեանների արձանապրութեանց մէջ  
և՝ իրենց ամունները: — Հաւաքական կամ ընկերացին սեղ-  
հականատիրութիւնից նոյնքան պիտի օգտուի այսօրուայ սեղ-  
հականատէրը, բուրժուա դասակարգը, որքան որ զործաւոր  
բանուոր դասակարգը: Սակայն բուրժուա դասակարգը չէ, որ  
պիտի հասաւատի ընդհանուրին բարեկեցութիւն բերող պայ-  
մանները, — այդ պիտի անի զործաւոր դասակարգը, պիտի-  
տարիատը: Բուրժուա դասակարգը այնպէս կօգտուի պրոլե-  
տարական յեղափոխութեան առաջ բերած քաղաքական և  
տնտեսական պայմաններից, ինչպէս որ ազնուական դասա-  
կարգը օգտուեց բուրժուական յեղափոխութեան առաջ բե-  
րած պայմաններից:

Պատմաթիւնն՝ զատկարդերի կուտի այդ արձունավիրը ցոյց  
է տալիս, որ արտօնիւթյալ զատկարդերը ամբողջամակ են համա-  
պատասխան իրենց անձիքական և երեւութական շահը զոհելու-  
իրենց անդամների իրական և տեւական շահներն Դա ձի ան-  
խուափելի ճակատագիր է՝ զատկարդավայրն աիրապեսութեան

վերապաշտուած, — տիրել, ուռչի, կոճղանալ և ասլա գոսա-  
նալ ու ընկնիլ՝ հակառակ իրենց կամքի, թէև իրենց ախրա-  
պեսութիւնն օրբանիզմի մէջ կանխապատրաստուած աղբակ-  
ների միջոցով և ձեռքով; Պասս է պատուական՝ որ ընկնելիք  
դասակարգերին աղաստագրել են իրենց կամքին հակառակ՝  
յ ե զ ա փ ո խ ա կ ա ն օ ր է ն: Նոյն այդ ճահաստագիրն է  
սպասում և՝ բուրժուա դասակարգին, սա էն հակառակ իր  
կամքին, պիտի աղաստագրուի. բայց պիտի աղաստագրուի ո՞չ  
թէ իր սեպհական ծիփով, այլ պրօլետարիատի ձեռքով ու  
այլպիսով վայելի ընկերացին այն բոլոր բարիքները, որ ան-  
քանական պիտի լինին հաւաքական, ընկերացին սեպհականակար-  
բութեան ստեղծած նոր կենացի պայմաններից:

三

Վրտագրութեան և, փոխանակութեան միջների ընկերականացումը կամ համապատասխան պարզութեան մասին դաշտումը — որ արդէն հաւաքական գործածութիւնն են դարձել — կարող է իրավուրծութիւն միայն այն ժամանակի, եթե կապ կառ է առ առ դասաւորութեան մեջ և կապ կառ է առ առ առ դասաւորութեան մեջ:

ի հարկէ սա շատ բացարձակ և շատ արծատական կարող է համարուիլ գաղջ և վախկուս մտքերի համար, մանաւանդ խնդրի միանդամից այսպէս պարզ և որոշակի կերպով հրապարակ դրուիլը բայց ի՞նչ սէտք ողորկ և երկմտութիւն յառաջանող բառերի, աւելի լաւ է կտրուկ և ածէն ինչ իր տեղին և որակին ճէջ, քանի որ գիտական իրականութիւնը այզպէս է պահնջում: Այդ իրողութիւնը կրայ անպայման կերպով, որպէսկետե ներզործող, ստեղծող աղբակները այժմեանից ի՞նկ գա ճակատագրական անխուսափելութիւն են դարձրել:

Որ ացգուէս կլինի, ի նկատի առնենք Գետեւեալ հանգամանքները:

Ա. — Կապիտալիսա ընկերութեան մէջ ամէն ձեւափոխութիւնների համար էքսպրուզիվիան (ընչաղլիւծը) օրէնք է<sup>2)</sup>

թ. — Ներկայ կորպերի բնական և անհրաժեշտ զարգացումը այս էքսպլուատիվիան օրեց օր դիւրին և ճատչելի է առաջնություն:

Գ. — Այդ էքսպրոպրիացիան միայն կլինի — յայտնի աստիճան և գալիք մատնաւոր պայմաններից կախումն ունեցող — վարձահատուցումն տալով սեպհականազրկուողներին, Էքսպրոպրի (exproprié) եղանակին :

¶.— Ներկայ արտադրությունը պայմանակիրը Հիսողհետէ առ Բասառականացած անջնաժեշտ են դարձնում:

**Ե.** Եցալորսիդական օրնիք է գասակարգերից ձեւի անհետան և ծնասի փոխառնման պահանջ:

Երեսմն իրենց տանիք, իրենց փողքիկ արշեստանոցի ձէց

նստած աշխատում էին, իրենց սեսչական գործիքներով  
նախկին արհեստաւորները, ձանր արտադրողները, ուր են  
նրանք, — գործարանների մէջ. ո՞վ մացրեց նրանց այնտեղ  
— գործարաննատէրը. լինչալէս, — նրանց սեսչականութիւն-  
լով. նրանց պրօկետապայտնելով. ինչո՞վ, — ճարտարագործական  
յառաջադիմութեանք:

<sup>\*)</sup> Անշուշտ էքսպրօպրիացիան պէտք է հասկանալ դառակարգավորման սեպհականազմիման ճարգով, և ո՞չ թէ նախայարձակումն կողապտելու այն գործողութիւնը, որ կատարում է Թուրաստանուն և կոչում է, իմաստի աղջատումից յառաջացած, է բ ո պ ր օ պ ր ի ա ց ի ա, այսինքն աւազակայն յափշակութիւն:

Կապիտուլիստը, բուրժուան ուրեմն ինչո՞ց սեպհականութերեց  
նրանց.

Ա. — Կրեմյան աշխատանքի գործիքներից: Այն գործիքները որ ճի ժամանակ հարստութիւն<sup>1)</sup> արտազդելու էին նպաստում, այլևս ոչնչի չծառալույթին, բայց այրուելու փայտ լինելուց, օրինակ՝ նախկին ճախրաբակը, թեշին, դազգեահը, ևն:

Բ. — Ի երևաց անկախիքական ճարավիկութիւնից: Ներկայ մեջ քննան ջնջեց այն բոլոր հմտութիւնները, որ նախակին արշեստառորդ ձեռք էր բերել իր աշկերտութեան տարբիների ընթացքում:

Գ. — Երեխոց ընտանիքան յարկից : Ոջախը քանդուեց ,  
տունը կրցըք իր նշանակութիւնը և դարձաւ լոկ օթ և ան ,  
սրով կ'ետև կիմները և երկսեռ երեխաները լցուեցան գործա-  
րանները :

Դ. — Երենց աշխատանքի արդիւնքից, Գործառների վառառիլ, շահ կամ շահաբաժնի անուան տալ, կեղոնացաւ կա'ն տուվական անհատների և կամ հաւաքական մարդիների ձեռքը, ինչպէս են՝ գործառերերը, զանազան շահակցական ընկերութիւնները, ևայլ:

Այս է, ուրեմն, նորագոյն արաւորութեան ընթացքը, մի ընթացք՝ որ յառաջանում է աւերակների վրայով, խակ այդ աւերակները կազմում են փոքրիկների քայցայտմից՝ խաչորների ձեռքսփ և այդ ո՛չ թէ մէկ, այլ մարդիկայն գործունէութեան բոլոր ճիւղերի մէջ, — Հսկայ վաճառատների բարգաւաճումը կերպուել է բայցամիւ փոքր խանութիւնների մասնկաւթիւնից, մեծ երկաթաճուլարանները հարիւրառը դարբնոցների անկումից են կապառել և այսն:

Սօյիսաւ-Դէմօլիքրատիսայի պահանջած սեպէշականազդրկւմը  
(Էքսպուլիսիցիս) խոշորների սեպէշականազդրկւմն է յօդուա  
փոքրերի։ Կա կտղապատղ փոքրածանութեան էքսպուլիքրիսա-  
ցիսն է յօդուա կողովուող մեծածանութեան։ Աւրիշ ար-  
տայայտութեամբ՝ զա ս ե պ հ ա կ ա ն ա զ ր կ ո լ ն ե ր ի  
ս ե պ հ ա կ ա ն ա զ ր կ ո ւ մ ն է։

Սեպհականազգորկուներից յ ե տ է ա ռ ն տ ու մ այն, ինչ որ  
նրանք յափշտակել են: Նրանց ստիպում են վերադարձը և ուրիշներից խլուածը: Եւ աչքի առաջ ունենալով, մի կողմից, որ կապիտալիստ սեպհականազգորդները արդէն սեպհականազգիկել են աշագին թիւ ճառապայի. միւս կողմից՝ որ նրանք չեն ել հետաքրքրում Ճարտարագործութեան արաւադրութեամբ, այս հանդամանքը արդէն բաւականին զիւրացնում է Սօցիալ-Դէմոկրատիայի գործը: Արտադրութիւնը, այժմս, վարողները ո՛չ թէ կապիտալիստներն են, այլ վարձագնում աշխատադիների մի ընտրեալ ճառը, հետեւաբար նրանց սեպհականազգիկելը և ո՛չ մի վատ արդիւնք կյառաջանի հանքերի, երկաթուղիների, բարձրահնոցների, ճանարանների, գիւտուածարանների, եացմի, վրան: — Սրանց բոլորն ելիքնց պաշտօնը կշարունակեն կատարել առաջուան նման առանց նշանակելի անդամ գարձնելու նաև ի ի ն տիրոպիտացումը:

Մինչև ցարդ կատարուած բոլոր էքսպրովիլայշիները եղիլ  
են առանց որ և է փոխարինութեան, մինչդեռ այս էքսպրո-  
պրիլայշին է միայն, որ իրեն հետ յայտնի մի աստիճանի վար-  
ձահատուցումն ալիսի բիրլի: Առ է նախկին ստայնանկի  
վարձահատուցումը. մեքենայ-դադիկահը նրան ու և է փոխա-  
րինութիւն արեց: Նախկին սալլապաններին, ջորեալաններին,  
ու լուսաբաններին . . . փոխարինութիւն եղաւ երկաթուղիների  
կողմից: Զուր ճատակարարութիւների ընկերութիւնը նախկին  
ջրկիրճներին վարձահատուց եղաւ:

Ընկերային այս էքսպրոայրիացիան չշմարիտ հասարակական

ծառայութիւնների պլիտի յատկաննուի, օրինակ՝ յօդուո մաս-  
կութեան, ծերութեան, Հիւանդութեան, ևայդն: Այսպիսի հաս-  
տատութիւններից նոյնքան պլիտի օպուուեն համայնքի միւս  
անդամները, որքան որ իրենք՝ նախկին սեպհականազրկուող-  
կապիտալիստները: Եթբ արտազրութեան և փոխանակութեան  
բոլոր միջոցների սեպհական ակցիուութիւն տեղի կու-  
նենայ, այն ժամանակ համայնքական արտադրութեան արդին-  
քից՝ հաւատար աշխատանքով՝ հաւատար բաժին կստանան և՝  
նախկին կապիտալիստները, — այլ էլ կլինի նրանց համար  
փոխարինութիւն, գուցէ և ուրիշ թեթեութիւններ էլ արուես-  
